ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2023 թվականի N 734-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՇԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև անցկացվող բանակային խաղերի՝

1) անցկացման կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ստուգողական կետի նկարագրի սյունակներում կիրառվող նշանների օրինակելի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) նախահաշիվը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) ժամանակացույցը՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև անցկացվող բանակային խաղերի ծախսերն իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

16.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ